Արձանագրություն N 5

«ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի շարունակության

ք. Կապան «07» ապրիլ 2017թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ Ժ. Բաբայանը և Ն. Մովսիսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մկրտչյան

Ի. Արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստի շարունակության մասին
(Ի. Հայրապետյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա/ համապատասխանում է՝

«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ի, «Արտադրական Բազա» ԲԲԸ-ի, «Ոսմար» ՍՊԸ-ի, «Էլդոգար» ՍՊԸ-ի, «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, «Գուրոս» ՍՊԸ-ի և «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «Բավարար»

բ/ չեն համապատասխանում՝

«Արհովշին» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը և գնահատվել է «անբավարար» հետևյալ հիմնավորմամբ.

Սույն ընկերությունը ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 46-րդ կետի սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը,

Մեծ հիմք Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը և գնահատվել է «անբավարար» հետևյալ հիմնավորմամբ.

սույն ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

ա/ 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ին

2-րդ չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Ոսմար» ՍՊԸ-ին

3-րդ չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Էլդոգար» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին, 3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին, 4-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Գուրոս» ՍՊԸ-ին, 5-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Արտադրական Բազա» ԲԲԸ-ին, 6-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Արհովշին» ՍՊԸ-ին, 7-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Մավշին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ին, ՀՀ ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան 4-րդ հարկ, N 404 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ի. Հայրապետյան

Անդամ՝ _____ Ժ. Բաբայան

_____ Ն. Մովսիսյան

Քարտուղար՝ _____ Տ. Մկրտչյան